## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ու Մ
**30 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 6**

### ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 30.01.2017Թ. ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝ ավագանին *ո ր ո շ ե ց.***

**Հաստատել Շահումյան համայնքի ավագանու 30.01.2017թ. նիստի օրակարգը՝**

1. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ **2017**Թ.ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
2. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ,
3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
4. ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ :

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԻԶՅԱՆ ԳԵՂԱՄ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԲԱԲԱՅԱՆ ՄԱՆՈՒԿ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ԱԲԳԱՐ
5. ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ
6. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻԿ
7. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
8. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ
9. ՀՈՎԱՍԱՓՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**30 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 7-Ն**

**ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ.ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով<<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18)-րդ կետի,<<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի, 12-րդ հոդվածի 1-ին,2-րդ մասերի,13-14-րդ հոդվածների,<<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1. 1) կետի պահանջներով՝ ավագանին ո ր ո շ ու մ է.

*1. Սահմանել Արարատի մարզի Շահումյան համայնքի 2017 թվականի՝*

ա) տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1 հավելվածի,
բ) տեղական վճարների դրույքաչափերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 25-ի <<Շահումյան համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 26-Ն որոշումը/հավելված 1,հավելված 2/:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԻԶՅԱՆ ԳԵՂԱՄ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԲԱԲԱՅԱՆ ՄԱՆՈՒԿ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ԱԲԳԱՐ
5. ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ
6. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻԿ
7. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
8. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ
9. ՀՈՎԱՍԱՓՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

Հավելված թիվ 1
Շահումյան համայնքի ավագանու
30 հունվարի 2017թ.
թիվ 7 -Ն որոշման

# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ | ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ |
|---|---|---|
| 1) | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան ՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի,շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի)թույլտվության համար. | |
| | <u>ա. հիմնական շենքերի և շինությունների համար ՝</u><br>մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար | 15.000դրամ |
| | <u>բ. սույն կետի << ա >> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝</u> | |
| | - 200-ից մինչև 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 30.000դրամ |
| | - 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 50.000դրամ |
| | -1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 50.000դրամ |
| | - 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 100.000դրամ |
| | գ. <u>*Ոչ հիմնական շենքերի շինությունների համար՝*</u> | |
| | _մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 3.000դրամ |
| | - 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 5.000դրամ |
| 2) | Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման , ուժեղացման ,արդիականացման և բարեկարգման աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի)թույլտվության համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով ՝<br>ա. չի նախատեսվում կցակառույցների ,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական | 3.000դրամ |

| | | |
|---|---|---|
| | նշանակության փոփոխություն՝<br>բ.բացի շենքերի և շինությունների վերակառուցման , ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից,նախատեսվում է նաև կցակառույցների վերնակառույցների ,շենքի տրամաչափին չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա ) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն և, բացի սույն կետի <<ա>>ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,<br><br>գ.նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ՝ստորգետնյա ) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն ,ապա, սույն օրենքի իմաստով ,այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը. | |
| 3) | Համայնքի վարչական տարածքում շենքերի ,շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման ( բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի ) թույլտվության համար | 5.000դրամ |
| 4) | Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի,սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 200.000դրամ |
| 5) | Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 60.000դրամ |
| 6) | Համայնքի վարչական տարածքում<br>*<u>Ոգելից և ալկոհոլային խմիչքների և</u>* (կամ ) ծխախոտի արտադրանքի *<u>վաճառքի թույլտվության համար՝</u>*<br>*<u>ա. Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության</u>* *համար ՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝*<br>ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 2.000դրամ |
| | -26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 10.001դրամ |
| | -50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 13.001 դրամ |
| | - 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 20.001դրամ |
| | -200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես | |

| | | |
|---|---|---|
| | ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 25.001դրամ |
| | -500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 45.001դրամ |
| | բ. <u>*Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝*</u> | |
| | - մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 2.000դրամ |
| | - 26 – ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 10.001դրամ |
| | -50-ից ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 13.001դրամ |
| | - 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 20.001դրամ |
| | -200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 25.001դրամ |
| | - 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 45.001դրամ |
| 7) | Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 1 քմ-համար՝ | 350 դրամ |
| 8) | Համայնքի վարչական տարածքում առևտրի,հանրային սննդի,զվարճանքի , շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին,խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | |
| | ա. առևտրի օբյեկտների համար | 5000դրամ |
| | բ.հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար | 25.000դրամ |
| | գ.բաղնիքների (սաունաների) համար | 200.000դրամ |
| | դ.խաղատների համար | 500.000դրամ |
| | ե.շահումով խաղերի համար | 250.000դրամ |
| | զ.վիճակախաղերի համար | 100.000դրամ |

| | | |
|---|---|---|
| 9) | համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝<br>*ա. հիմնական շինությունների ներսում՝*<br>- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝<br>- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝<br>- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝<br>- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝<br>- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝<br>- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝<br>*բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝*<br>- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝<br>- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝<br>- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝<br>- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝<br>- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝<br>- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ | 1.000դրամ<br>5.001դրամ<br>10.001դրամ<br>15.001դրամ<br>20.001դրամ<br>30.001դրամ<br>500դրամ<br>1.001դրամ<br>2.001դրամ<br>4.001դրամ<br>8.001դրամ<br>15.001դրամ |
| 10) | ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝<br>ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝<br>բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝<br>գ. սոցիալական գովազդի համար՝<br>դ. այլ արտաքին գովազդի համար՝<br>ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով<br>զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով | 2.000դրամ<br>3.500դրամ<br>0 դրամ<br>2.000դրամ<br>500դրամ<br>200դրամ |
| 11) | Համայնքի խորհրդանիշը (անվանում), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում | |

| | | |
|---|---|---|
| | օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 100.000դրամ |
| 12) | Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ | 10.000դրամ |

Սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ ,10-րդ, 11-րդ, 12-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաշվարկել 0.5 գործակցի կիրառմամբ,4-րդ կետով սահմանված դրույքաչափը՝0.75 գործակցի կիրառմամբ,իսկ 6-9-րդ կետերով սահմանված դրույքաչափերը՝ 0.3 գործակցի կիրառմամբ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Շ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված թիվ 2
Շահումյան համայնքի ավագանու
30 հունվարի 2017թ.
թիվ 7-Ն որոշման

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ | ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ |
|---|---|---|
| 1. | Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աճուրդներ և մրցույթներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճարը սահմանել | 3.000դրամ |
| 2. | Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար յուրաքանչյուր բնակչի համար սահմանել ամսեկան | 5 դրամ |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Շ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**30 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 8**

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5) կետի պահանջով՝ ավագանին ո ր ո շ ե ց.

Համայնքի բյուջեի մեկ տարվա կատարման վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԻԶՅԱՆ ԳԵՂԱՄ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԲԱԲԱՅԱՆ ՄԱՆՈՒԿ
4. ՁԱՔԱՐՅԱՆ ԱԲԳԱՐ
5. ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ
6. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻԿ
7. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
8. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ
9. ՀՈՎԱՍԱՓՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Շահումյան համայնքի ավագանու 2017թվականի
հունվարի 30-ի N 8 որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

| ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2016թ. | | ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ % |
|---|---|---|---|
| | ՊԼԱՆ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | ՓԱՍՏԱՑԻ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | |
| Վարչական բյուջե | 94184.3 | 103894.6 | 110.3 |
| Հողի հարկ | 16350.0 | 16658.52 | 101.9 |
| Գույքահարկ | 8400.0 | 17115.75 | 203.7 |
| Տեղական տուրք՝ընդամենը | 650.0 | 651.5 | 100.2 |
| Համայնքային հողերի օգտագործման վարձավճար | 2447.0 | 2536.75 | 103.7 |
| Տեղական վճարներ | 240.0 | 240.0 | 100.0 |
| Այլ մուտքեր | - | 594.8 | |
| Պետական բյուջեից համահարթեցման դոտացիա | 66097.3 | 66097.3 | 100.0 |
| Ֆ/բ-ի տարեսկզբի մնացորդը | 16903.2 | 16903.2 | 100 |
| Օտարվող հողի վճար | 5810.0 | 1.942.7 | 33.4 |
| *Եկամուտներ: Ընդամենը* | ***116897.5*** | 122740.5 | *105.0* |
| | | | |

| ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2016թ. | | ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ % |
|---|---|---|---|
| | ՊԼԱՆ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | ՓԱՍՏԱՑԻ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | |
| Վարչական բյուջե | 94184.3 | 85679.7 | |
| Օրենսդիր և գործադիր մարմին 01.1.1 Պետական կառավարում | 34097.7 | 30097.7 | |
| Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ 01.3.1 | 34097.7 | 30097.7 | |
| ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 01.3.3 | 1100.0 | 1052.8 | |
| Արտադպրոցական դաստիարակություն | 10770.0 | 10770.0 | |
| Աղբահանում 5.1.1 | 3200.0 | 3130.0 | |
| Առողջապահություն | 600.0 | 600.0 | |
| Գրադարան 8.2.1 | 1400.0 | 1400.0 | |
| Այլ մշակութային կազմակերպություն 8.2.4 | 2000.0 | 1870.0 | |
| Նախադպրոցական կրթություն 9.1.1 | 20500.0 | 18700.0 | |
| Միջնակարգ ընդհ.կրթություն 9.2.2 | 600.0 | 600.0 | |
| Սոցիալական հատուկ արտոնություն 10.7.1 | 11500.0 | 11290.0 | |
| Փողոց.վերակառուցում ,հիմնանորոգում4.5.1 | 6000.0 | 4700.0 | |
| Այլ ծախսեր | 2916.6 | 1469.2 | |
| Ֆոնդային բյուջե | 21903.2 | 19945.6 | |
| *Ընդամենը* | *116087.5* | *105625.2* | |

Աշխատակազմի քարտուղար՝ Շ.Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ
30 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 9

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21)-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 76-րդ հոդվածի պահանջներով՝ ավագանին ո ր ո շ ե ց.

1. Թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող գյուղ. նշանակության /ծածկագիր 0241-0001-հց/ 3.79հա վարելահողը տրամադրել վարձակալությամբ՝ մրցութային կարգով:
2. Վարձակալությամբ տրվող հողամասի մրցույթի մեկնարկային գինը սահմանել զուտ եկամտի 18%-ի չափով:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԻԶՅԱՆ ԳԵՂԱՄ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԲԱԲԱՅԱՆ ՄԱՆՈՒԿ
4. ՉԱՔԱՐՅԱՆ ԱԲԳԱՐ
5. ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ
6. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻԿ
7. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
8. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ
9. ՀՈՎԱՍԱՓՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Շահումյան, 6-02-27 shahumyan.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 10

## ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21)-րդ կետի պահանջներով՝ ավագանին *ո ր ո շ ե ց.*

*Թույլատրել համայնքի ղեկավարին աճուրդային կարգով օտարելու՝*

1. 0048ծածկագրի տակ հաշվառված հողատարածքներից հասարակական կառուցապատման 0.05 հա հողամաս,
2. Օտարվող հողամասի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԶԻԶՅԱՆ ԳԵՂԱՄ
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
3. ԲԱԲԱՅԱՆ ՄԱՆՈՒԿ
4. ԶԱՔԱՐՅԱՆ ԱԲԳԱՐ
5. ԷՅԼԱՍՅԱՆ ԳՈՌ
6. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻԿ
7. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ
8. ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՐԱՏ
9. ՀՈՎԱՍԱՓՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՐԺԻԿ ԲԱԲԱՅԱՆ